# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գողթ համայնք, ՀՀ,
Կոտայքի մարզ, գ. Գողթ, հրապարակի 1, Հեռ.
(096) 33-32-32 , goghtnamaync@yandex.ru

N 94
*19 մարտի 2020թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 30 հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի՝ Ձեզ ենք ներկայացնում Գողթ համայնքի ավագանու 18-ը մարտի 2020թ. թիվ 2 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 8 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գողթ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գողթ, 096 33 32 32, goghthamaynq@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 6

### ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14 հոդվածի՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել Գողթ համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 18-ի N 2 հերթական նիստի օրակարգը

1. Գողթ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 51-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացում՝ սուբվենցիա ստանալու նպատակով 2020 թվականի բյուջետային ֆինանսավորման ծրագրին մասնակցելու մասին:
3. Գողթ համայնքի տարածքում գտնվող հողատարածքները համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ վաճառքի եղանակով օտարելու մասին:
4. Գողթ համայնքի տարածքում գտնվող հողատարածքները համայնքային սեփականություն ճանաչելու և ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի եղանակով օտարելու մասին:
5. Գողթ համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքը աճուրդ վաճառքի եղանակով օտարելու մասին:
6. Գողթ համայնքի, իրավաբանական անձի և պետական սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու համաձայնություն տալու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎԱՐԻԶ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գողթ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գողթ, 096 33 32 32, goghthamaynq@yandex.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

18 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 7-Ն

## ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33 հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Գողթ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի <<Գողթ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 51-Ն որոշման 1-ին կետում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի:
2. Գողթ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի <<Գողթ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 51-Ն որոշման 2-րդ կետում << Համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից կատարվող հնարավոր վերաբաշխումների չափաքանակը սահմանել 2020 թվականի բյուջեի ընդհանուր ծավալի 20 տոկոսի չափով >> բառերը փոխարինել << Համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից կատարվող հնարավոր վերաբաշխումների չափաքանակը սահմանել 2020 թվականի բյուջեի ընդհանուր ծավալի 10 տոկոսի չափով >> բառերով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎԱՐԻՉ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված 1

Գողթ համայնքի ավագանու

2020թ մարտի 18-ի N 7-Ն որոշման

# ՀԱՎԵԼՎԱԾ

. Գողթ համայնքի 2020թ. բյուջեի ծախսային մասի 04-02-01 (անասնաբուժական ծառայություններ) 4241 (մասնագիտական ծառայություններ) հոդվածը ավելացնել 300000 (երեք հարյուր հազար) դրամով:

. Գողթ համայնքի 2020թ. բյուջեի ծախսային մասի 01-01-01 (աշխատակազմ) 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածը ավելացնել 17000000 (տասնյոթ միլիոն) դրամով:

. Գողթ համայնքի 2020թ. բյուջեի եկամտային մասի 07-02-00 (գույքահարկ քաղաքացիական փոխադրամիջոցներից) հոդվածը ավելացնել 300000 (երեք հարյուր հազար) դրամով:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գողթ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գողթ, 096 33 32 32, goghthamaynq@yandex.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 8

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի և Գողթ համայնքի ղեկավարի առաջարկության՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարին ներկայացնելու մասնակցության հետևյալ հայտը՝ դպրոց տանող 6-րդ փողոցի ասֆալտապատում:
2. Սուբվենցիայի ստացման համար գործող կարգով կազմել և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարան ներկայացնել սոցիալական զարգացման ծրագրի ֆինանսավորման հայտը:
3. Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2020 թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրն իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎԱՐԻԳ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գողթ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գողթ. 096 33 32 32, goghthamaynq@yandex.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 9

### ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետի, <<Հողային օրենսգրքի>> 63 հոդվածի 3-րդ մասի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Կադաստրային ծածկագիր 07-026-0012-0051-ից 0.10000 հա Գեղարդի խճուղի 9-րդ փակուղի թիվ 18/3 հասցեի բնակելի կառուցապատման բնակելի հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և աճուրդ վաճառքի եղանակով օտարել՝ 1 300 000 /մեկ միլիոն երեք հարյուր հազար/ դրամ մեկնարկային գնով:
2. Կադաստրային ծածկագիր 07-026-0012-0011 0.14447 հա Գեղարդի խճուղի 9-րդ փակուղի թիվ 18/4 հասցեի բնակելի կառուցապատման բնակելի հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և աճուրդ վաճառքի եղանակով օտարել 1 800 000 /մեկ միլիոն ութ հարյուր հազար/ դրամ մեկնարկային գնով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎԱՐԻԶ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գողթ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գողթ, 096 33 32 32, goghthamaynq@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 10

### ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետի, <<Հողային օրենսգրքի>> 66 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Կադաստրային ծածկագիր 07-026-0115-ից 0.18835 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն և կադաստրային արժեքով, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի եղանակով օտարել 07-026-0115-0036 կադաստրային ծածկագրով հողակտորին:
2. Կադաստրային ծածկագիր 07-026-0115-0091 0.04462 հա գյուղատնտեսական նշանակության այգին ճանաչել համայնքային սեփականություն և կադաստրային արժեքով, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի եղանակով օտարել 07-026-115-0027 կադաստրային ծածկագրով հողակտորին:
3. Կադաստրային ծածկագիր 07-026-0115-0084 0.00554 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և կադաստրային արժեքով, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի եղանակով օտարել 07-026-115-0026 կադաստրային ծածկագրով հողակտորին:
4. Կադաստրային ծածկագիր 07-026-0012-0013-ից 0.20000 հա Գեղարդի խճուղի 9-րդ փակուղի թիվ 18/2 հասցեի բնակելի կառուցապատման բնակելի հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և կադաստրային արժեքով, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի եղանակով օտարել Գեղարդի խճուղի 9-րդ փակուղի 18/1 հասցեի հողամասի սեփականատեր Էդուարդ Նազարյանին:

Կողմ -6. Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎԱՐԻՉ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գողթ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գողթ, 096 33 32 32, goghthamaync@yandex.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 11

### ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հողային օրենսգրքի>> 63 հոդվածի 3-րդ մասի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Կադաստրային ծածկագիր 07-026-0001-0009 0.07282 հա բնակավայրերի հողատեսքը՝ բնակելի կառուցապատման հողամասը աճուրդ վաճառքի եղանակով օտարել 850 000 /ութ հարյուր հիսուն հազար/ դրամ մեկնարկային գնով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎԱՐԻԶ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գողթ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գողթ, 096 33 32 32, goghthamaync@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՄԱՐՏԻ 2020 թվականի N 12

### ԳՈՂԹ ՀԱՄԱՅՆՔԻ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի անդամների>> թիվ 14 դրական եզրակացությունը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը Գողթ համայնքի վարչական տարածքում ընդգրկված գյուղատնտեսական նշանակության հողերից, այդ թվում՝ համայնքի սեփականություն հանդիսացող 0,1 հա /կադաստրային ծածկագիր՝ 07-026-0153-ից/, իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 1.32094 հա /կադաստրային ծածկագիր՝ 07-026-0102-0191/ և պետական սեփականություն հանդիսացող 0,1 հա /կադաստրային ծածկագիր՝ 07-026-0253-ից/ հողամասեր փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակության:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎԱՐԻԶ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ